ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2016 թվականի թիվ 37- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁԱՎԱՆ, ԻԾԱՔԱՐ, ՀՈՎՔ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ.մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16 ա) կետի պահանջներով և հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով <<Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին նախատեսվել է 1876.8 հազար դրամ գումար,

ո ր ո շ ու մ եմ՝

1. Դեղձավանից-Պտղավան, Իծաքարից-Նավուր, Ներքին Հովքից-Հովք մեկնող յուրաքանչյուր դպրոցահասակ երեխայի տրանսպորտային ծախսի փոխհատուցման օրական վճարը սահմանել մեկ հարյուր /100/ դրամ, իսկ Իջևանից Հովք յուրաքանչյուր մանկավարժի տրանսպորտային ծախսի փոխհատուցման օրական վճարը երեք հարյուր/300/ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

17 մարտի 2016թ.
ք. Իջևան